

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ

նաեւ կոչուած՝

«ՄԵՐ ԱՆԿԱՍԿԱԾ, ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ,
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱԻԱՏՔԻՆ
ՏԱՍՆԵՐԿՈՒ ԿԷՏԵՐԸ»

1. Կը հաւատամ Ամենակալ Հայր Աստուծոյ, երկինքի եւ երկրի Արարիչին,
2. Եւ Յիսուս Քրիստոսի, անոր միածին Որդւոյն, մեր Տիրոջ,
3. Որ յղացուեցաւ Սուրբ Հոգիէն եւ ծնաւ կոյս Մարիամէն.
4. Չարչարուեցաւ Պոնտացի Պիղատոսի իշխանութեան տակ, խաչուեցաւ, մեռաւ եւ թաղուեցաւ. դժոխք իջաւ,
5. Երրորդ օրը մեռելներէն յարութիւն առաւ,
6. Երկինք համբարձաւ եւ Ամենակալ Հայր Աստուծոյ աջ կողմը նստաւ.
7. Անկէ *(երկինքէն)* պիտի գայ դատելու ողջերն ու մեռածները:
8. Կը հաւատամ Սուրբ Հոգիին,
9. Ընդհանրական Սուրբ Եկեղեցիին, սուրբերու հաղորդութեան,
10. Մեղքերու թողութեան,
11. Մարմինի յարութեան,
12. Եւ յաւիտենական կեանքին:

Ամէն: